

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Վահրամ Բեգլարյան	տնօրենների խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն	<p>Որպես գլխավոր տնօրեն՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից, ✓ ներկայացնում է Ընկերությունը ԼՂՀ-ում և արտասահմանում, ✓ գործում է առանց լիազորագրի, ✓ տալիս է լիազորագրեր, ✓ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային, ✓ բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ տարադրամային) և այլ հաշիվներ, ✓ Ընկերության Խորհրդի հաստատման է ներկայացնում Ընկերության աշխատանքային կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, ✓ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, ✓ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին, ✓ աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ: <p>Որպես Խորհրդի նախագահ՝</p> <ul style="list-style-type: none"> ✓ մասնակցել Խորհրդի նիստերին, ✓ մասնակցել Խորհրդի որոշումների քվեարկությանը:

Սպարտակ Թևոյան	Տնօրենների խորհրդի նախագահ	<ul style="list-style-type: none"> ✓ կազմակերպում է Խորհրդի աշխատանքները, ✓ գումարում է Խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք, ✓ կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրության վարումը, ✓ նախագահում է ԲԸԺ-ներում:
Մերուժան Բաբայան	Տնօրենների խորհրդի անդամ	<ul style="list-style-type: none"> ✓ մասնակցել Խորհրդի նիստերին, ✓ մասնակցել Խորհրդի որոշումների քվեարկությանը:
Արմեն Գասպարյան	Տեխնիկական տնօրեն	<ul style="list-style-type: none"> ✓ կատարում է Ընկերության էլեկտրահիդրոկայանների էլեկտրաէներգիայի արտադրության պլանավորում և աշխատանքի ռեժիմների մշակում
Ժան Հովհաննիսյան	Ֆինանսական տնօրեն	<ul style="list-style-type: none"> ✓ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության կառավարում
Արայիկ Դավթյան	Գլխավոր հաշվապահ	<ul style="list-style-type: none"> ✓ իրականացնում է հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների ժամանակին կազմումն ու ներկայացումը, ✓ աջակցում է Ընկերության սեփականության պահպանման, նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների խնայողաբար օգտագործման նկատմամբ վերահսկողությանը, ✓ կազմակերպում է հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ✓ գլխավորում է նախահաշիվների կազմման սկզբնական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերի նախապատրաստման աշխատանքները:

Կառավարման մարմինների տարեկան զեկույց

1)Թողարկողի բիզնեսի արդյունքների և զարգացման իրական պատկերի նկարագիրը`ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը,որի հետ առնչվել կամ առնչվում է թողարկողը:Այս նկարագիրը պետք է հավասարակշռված և համակողմանի վերլուծության ենթարկի թողարկողի ընդհանուր վիճակը,բիզնեսի արդյունքները և զարգացումը:Վերլուծությունները պետք է հնարավորություն տան պատկերացում կազմել թողարկողի ընդհանուր վիճակի,բիզնեսի արդյունքների և զարգացման մասին`ներառելով թողարկողի բիզնեսին յուրահատուկ ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերլուծությունը:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը էլեկտրաէներգիայի արտադրությունն է:

Ընկերությունը հիմնականում առնչվում է հետևյալ ռիսկերի և անորոշությունների հետ.

Արժույթային ռիսկեր.Այդ ռիսկերը ներառում են ՀՀ դրամի և այլ արժույթների փոխարժեքի զգալի փոփոխությունների հնարավորությունը,ինչպես նաև ՀՀ և ԼՂՀ դրամային կառույցների կողմից միջամտության կամ փոփոխությունների հնարավորությունը:

Բնակլիմայական պայմանների ռիսկեր.Բնակլիմայական պայմաններն ունեն էական ազդեցություն ընկերության գործունեության վրա:Ընկերության հասույթը էականորեն պայմանավորված է ջրի հոսքի ծավալներով:Չնայած նրան,որ նախկին մի քանի տարիների ջրի հոսքի ցուցանիշների վերլուծությունը թույլ է տալիս բավականին մեծ ճշտությամբ կատարել կանխատեսումներ,այնուամենայնիվ,բնակլիմայական գործոնով է պայմանավորված ընկերության հասույթի ծավալը և հետևաբար ֆինանսական ցուցանիշները:

Նշված ռիսկերն ու անորոշություններն էապես կազդեն նաև հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի վրա:

2011թ.-ի ընթացքում ընկերության արտադրության ծավալը կազմել է մոտ 104,209,803 կվտ/ժ էլեկտրաէներգիա,ինչը կազմում է մոտ 1,029,859,254 ՀՀ դրամ:

Ընկերության արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները և հասույթը` ըստ տարիների բերված է թիվ 1 աղյուսակում:

«Արցախ ՀԷԿ»ԲԲԸ արտադրված էլեկտրաէներգիայի ծավալները և հասույթը՝ ըստ ամիսների*

Աղյուսակ 1

Ամիս	Մարսանգ		Թրդի-1		Թրդի-2	
	Արտադրանք	Հասույթ (դրամ)	Արտադրանք	Հասույթ (դրամ)	Արտադրանք	Հասույթ (դրամ)
Հունվար	14558000	131022000	249760	4495680	0	0
Փետրվար	11392400	102531600	252420	4543560	0	0
Մարտ	1103200	9928800	513030	9234540	0	0
Ապրիլ	0	0	955360	17196480	0	0
Մայիս	32000	288000	1689170	30405060	0	0
Հունիս	5834400	52509600	1159690	20874420	0	0
Հուլիս	8475600	76280400	782880	14091840	0	0
Օգոստոս	10237200	92134800	630000	11340000	0	0
Սեպտեմբեր	14487600	130388400	559650	10073700	0	0
Հոկտեմբեր	13454800	121093200	724360	13038480	0	0
Նոյեմբեր	8106800	72961200	654290	11777220	574949	10349082
Դեկտեմբեր	6308800	56779200	540330	9725940	933114	16796052
Ընդամենը	93990800	845917200	8710940	156796920	1508063	27145134

<Արցախ ՀԷԿ >ԲԲԸ վարկերի ծավալը 2011թ. ընթացքում

Աղյուսակ2

«Արցախ

Վարկի կամ փոխառության աղբյուրը	Նոր վարկեր	Մարումներ
ՓԲԸ <Արմավիսբանկ>	240.500EUR,1.100.000 USD,248.200 EUR	45.115.000ՀՀ դրամ,82.419USD,46.026.000ՀՀ դրամ,237.000 EUR,46.965.000 ՀՀ դրամ,240.500 EUR,33.333.000ՀՀ դրամ
ԼՂՀ Ֆինանսների նախարարություն	60.000.000ՀՀ դրամ,1.100.000 USD	300.000USD,800.000USD,60.000.000ՀՀ դրամ
Արցախի ազատամարտիկների միություն	200.000USD,500.000 USD	500.000USD
<ԲԼԵՄՍ>ՈՒՎԿ ՍՊԸ	200.000.000ՀՀ դրամ	800.000 USD
Արցախի ներդրումային հիմնադրամ		23.317USD,23.317USD
ՓԲԸ<Արցախբանկ>	2.000.000 USD,13.000.000ՀՀ դրամ	142.000USD,13.000.000ՀՀ դրամ,2.242.500 USD
Ֆ/ա Բ. Բեգլարյան		750.000USD
Ֆ/ա Ս. Կարապետյան		300.000USD
Ընդամենը	488.700EUR,4.900.000USD ,273.000.000ՀՀ դրամ	477.500EUR,5.963.553USD,244.439.000ՀՀ դրամ

Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները և գործակիցները բերված են թիվ 3 և թիվ 4 աղյուսակներում.

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2011Թ.

Աղյուսակ 3

Ցուցանիշ	Հազ.դրամ
Արտադրանքի իրացումից հասույթ	1,029,859
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-343,641
Իրացման ծախսեր	-5,158
Վարչական ծախսեր	-182,636
Գործառնական գործունեությունից շահույթ	471,537
2011թ. Շահույթ	227,442
Դեբիտորական պարտք	1,177,333
Կրեդիտորական պարտք	3,649,688

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ 2011Թ.

Աղյուսակ 4

Ցուցանիշի անվանումը	01.01.2012թ.
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով(EPS)	25
Սեփական կապիտալի շահութաբերություն(ROE)	2,2%
Ակտիվների շահութաբերություն(ROA)	1,6%
Զուտ շահույթի մարժա(NPM)	22%
Կապիտալի համարժեքության գործակից	76%
Ֆինանսական կախվածության գործակից	31%
Բացարձակ իրացվելության գործակից	0,15
Ընթացիկ իրացվելության գործակից	0,20
Ընդհանուր իրացվելության գործակից	2,05
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	2,95
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	124
Պաշարների շրջանառելիության գործակից	12,2
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	29,8
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	8,79
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	4152,2

2)Այն կարևոր դեպքերի նկարագիրը,որոնք տեղի են ունեցել հաշվետու ժամանակաշրջանի սկզբից մինչև զեկույցը պատրաստելու օրը:Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են,որոնք էական ազդեցություն են ունեցել թողարկողի ֆինանսական վիճակի վրա,ինչպես նաև այն դեպքերը,որոնք թողարկողի կարծիքով կարևոր են և (կամ)ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

•2011 թ. հունվարի 28-ին «Արցախի ՀԷԿ»ԲԲԸ տնօրենների խորհուրդը որոշել է ընկերության խորհրդի քարտուղար և կորպորատիվ քարտուղար ընտրել Դմիտրի Բեցկովին:

•2011թ. մարտ-ապրիլ ամիսներին Չինաստանից հրավիրված մասնագետների կողմից կատարվեց «Մատադիս-2»ՀԷԿ-ի սարքավորումների մոնտաժ:

•2011թ. մայիսի 10-ին«Նասդաք Օւեէքս Արմենիա»ԲԲԸ-ի կողմից ընդունվել է որոշում Ընկերության լրացուցիչ թողարկված 1,400,000 հատ սովորական անվանական բաժնետոմսերը ցուցակել և ընդգրկել Բորսայի բաժնետոմսերի երկրորդային ցուցակում,թույլատրել առևտրին ցուցակված բաժնետոմսի,հասցեական գործարքների և ռեպո գործարքների հարթակներում:

•2011թ. մայիսի 30-ին կայացել է«Արցախի ՀԷԿ»ԲԲԸ-ի բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով,որտեղ ընդունվել են որոշումներ`

1.Ընտրվել է Ընկերության տնօրենների խորհուրդ հետևյալ կազմով

- ✓Թևոյան Սպարտակ Ապետնակի
- ✓Բեզլարյան Վահրամ Վլադիմիրի
- ✓Բաբայան Մերուժան Հրանտի
- ✓Օհանջանյան Էմին Ռուբենի
- ✓Բեզլարյան Հայկ Բարսեղի

2.Հաստատվել է «Արցախի ՀԷԿ»ԲԲԸ-ի 2010թ.-ի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունները,հաշվապահական հաշվեկշիռները,զուտ շահույթի բաշխման համամասնությունները,այդ թվում` շահութաբաժինների մեկ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ 10% տարեկան եկամտաբերության հաշվարկով,մասհանումներ Գլխավոր պահուստին` զուտ շահույթի 5,7%-ը,չբաշխված շահույթ 300,000,000 (երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ:

3. 2010թ.-ի արդյունքներով ընկերության բաժնետերերին վճարել շահութաբաժիններ՝ 1 բաժնետոմսին 100 ՀՀ դրամ հաշվարկով՝ վճարումը սկսելով 2011թ. հունիսի 20-ից:

•2011թ. հունիսի 20-ին կայացել է Ընկերության տնօրենների խորհրդի նիստ,որտեղ ընդունվել են որոշումներ՝

1.Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ ընտրել Սպարտակ Թևոսյանին

2.Ընկերության խորհրդի քարտուղար ընտրել Դմիտրի Բեցկովին

3.Ընկերության գլխավոր տնօրեն նշանակել Վահրամ Բեգլարյանին

4.2011թ. օգոստոսի 01-ին գումարել ընկերության բաժնետերերի ժողով

•2011թ. հուլիսի 22-ին տեղի է ունեցել Ընկերության տնօրենների խորհրդի նիստ,որտեղ քննարկվել են ընթացիկ հարցեր,բացի այդ,ուսումնասիրվել են«Թրդի-3»ՀԷԿ-ի սարքավորումների պատվիրման համար առաջարկները:

•2011թ. օգոստոսի 01-ին հեռակա կարգով գումարվել է «Արցախ ՀԷԿ»ԲԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ժողով,որտեղ ընդունվել է որոշում՝ լրացուցիչ տեղաբաշխել 3,673,926 ,000(երեք միլիարդ վեց հարյուր յոթանասուներեք միլիոն ինը հարյուր քսանվեց հազար) ՀՀ դրամ ընդհանուր ծավալով, 3,673,926(երեք միլիոն վեց հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր քսանվեց)հատ 1.000(մեկ հազար)ՀՀ դրամ անվանական արժեքով ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմս:

•2011թ. օգոստոսի 03-ին տեղի է ունեցել Ընկերության տնօրենների խորհրդի նիստ,որտեղ ընդունվել են որոշումներ՝

Հաստատել «Արցախ ՀԷԿ»ԲԲԸ-ի 1.000 ՀՀ դրամ անվանական արժեքով 3,637,962 հատ ոչ փաստաթղթային հասարակ անվանական բաժնետոմսերի տեղաբաշխման պայմանները.

•2011թ. օգոստոսի 30-ին գրանցվել է «Արցախ ՀԷԿ»ԲԲԸ-ի բաժնետոմսերի ազդագիրը:

•2011թ. հոկտեմբերի 24-ին ավարտվել է Ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխումը

-Վաճառված արժեթղթերի ընդհանուր քանակը կազմել է 3,287,926(երեք միլիոն երկու հարյուր ութսունյոթ հազար ինն հարյուր քսանվեց)հատ:

•2011թ. հոկտեմբեր ամսին սկսվել են Թրդի-2 ՀԷԿ-ի փորձարկման աշխատանքները:

•2011թ. նոյեմբերի 03-ին տեղի է ունեցել Ընկերության տնօրենների խորհրդի նիստ,որտեղ որոշում է ընդունվել հրավիրել հեռակա կարգով Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով:

•2011թ. դեկտեմբերի 05-ին հրավիրվել է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողով,որտեղ որոշում է ընդունվել տեղաբաշխված բաժնետոմսերի հաշվին ավելացնել Ընկերության կանոնադրական կապիտալը 3,287,926,000 ՀՀ դրամով:

•2011թ. դեկտեմբերի 08-ին ԼՂՀ Պետական ռեզիստրի բաժնում գրանցվել է Ընկերության կանոնադրության փոփոխություն` կանոնադրական կապիտալը սահմանելով 10.650.000.000 ՀՀ դրամ:

•2011թ. դեկտեմբերի 27-ին Ընկերության բաժնետոմսերի երրորդ թողարկումը ցուցակվել է «ՆԱՄԴԱՔ ՕԷմեքս ԱՐՄԵՆԻԱ» ֆոնդային բորսայի բաժնետոմսերի երկրորդային ցուցակում:

•2012թ. հունվարի 05-ին Հայկական երկու Հանրապետությունների նախագահների մասնակցությամբ տեղի է ունեցել <Թրդի -2>ՀԷԿ-ի հանդիսավոր բացումը:

3.Թողարկողի հետագա հնարավոր զարգացման նկարագիրը

•2012թ. առաջին կիսամյակում նախատեսվում է «Մատադիս 1» և «Մատադիս 2 » ՀԷԿ-երի շահագործումը

•2012թ. պատվիրված է Թրդի 3-ի նախագիծը

•2012թ. նախատեսվում է Թրդի 3 –ի շինարարությունը

•Ընկերության 2012թ. Էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսումները
բերված են թիվ 5 աղյուսակում:

«Արցախի ՀԷԿ»ԲԲԸ ՀԷԿ-երում 2012թ. Էլեկտրաէներգիայի
արտադրության կանխատեսումներ

Աղյուսակ 5

մլն.Կվտ/ժամ

h/h	ՀԷԿ-ի անվանում	ամիսներ												ընդամենը տարի
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1	Սարսանգ ՀԷԿ	4.22	3.94	4.22	5.67	5.58	7.92	9.93	9.93	12.5	13.6	13.6	14	105.58
2	Թրդի 1 ՓՀԷԿ	0.43	0.39	0.75	1.19	1.53	1.51	1.51	1.1	0.72	0.62	0.56	0.5	10.79
3	Թրդի 2ՓՀԷԿ	0.94	0.85	1.38	2.02	2.77	3.33	2.31	1.67	1.23	1.04	1.2	1	19.76
4	Մատաղիս 1							2.91	2.06	2.46	2.76	2.7	2.9	15.76
5	Մատաղիս 2							1.86	1.51	1.54	1.76	1.72	1.8	10.23
	Ընդամենը	5.59	5.18	6.35	8.88	9.88	12.8	18.5	16.27	18.5	19.8	19.8	21	162.12

«ԱՐՑԱԽ ՀԷԿ»ԲԲԸ
2011Թ.ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՍԵՓԱՆԱԿԵՐՏ 2012